2015, ՆՈՅԵՄԲԵՐ Ա, ԹԻՎ 21 (449)

# Քրիստոնյա Հայաստան

## Վեստմինստերյան աբբայությունում տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության սուրբ նահատակներին նվիրված արարողություն

Հոկտեմբերի 28-ին Վեստմինստերյան աբբայությունում (Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն) Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ տեղի ունեցավ հիշատակի արարողություն՝ նվիրված Հայոց ցեղասպանության սուրբ նահատակներին:



Արարողությանը ներկա էին Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը եւ Նորին Արքայական Մեծություն Ուելսի արքայազն Չարլզը: Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի ոգեկոչման արարողությանը մասնակցում էին նաեւ Մեծ Բրիտանիայի եւ Իռլանդիայի հայոց թեմի հոգեւոր դասը՝ գլխավորությամբ թեմակալ առաջնորդ Հովակիմ եպս Մանուկյանի, քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, պետական պաշտոնյաներ եւ հրավիրյալներ:

Հիշատակի արարողության ընթացքում քույր Եկեղեցիների ներկայացուցիչները, Հայոց ցեղասպանության վերապրածների ժառանգները Մեծ եղեռնի նահատակ հայորդիների համար առ Աստված աղոթք բարձրացրին՝ երախտագիտություն հայտնելով բոլոր այն պետություններին, կազմակերպություններին եւ անհատներին, ովքեր այսօր ջանքեր են գործադրում աշխարհում խաղաղության հաստատման եւ արդարության վերականգնման համար: Ներկաներն աղոթեցին նաեւ հանուն Միացյալ Թագավորության եւ Հայաստանի Հանրապետության անվրդով ու բարօր կյանքի:

Շարականների կատարումներով հանդես եկավ Լոնդոնի Ս. Եղիշե հայկական եկեղեցու երգչախումբը՝ ղեկավարությամբ Արիս Նադիրյանի:

Արարողության ավարտին ներկաներին իր պատգամն ուղղեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Անգլիկան Եկեղեցու եւ հավատացյալների անունից խոսք ասաց նաեւ Քենթրբերիի արքեպիսկոպոսի ներկայացուցիչ, Լոնդոնի եպիսկոպոս լորդ Ռիչարդ Չարթրեսը:

### Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԷԿՈՒՄԵՆԻԿ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

*Ձե՛րդ Գերազանցություն ՀՀ Նախագահ,*
*Ձե՛րդ Արքայական Մեծություն,*
*Սիրելի՛ բարեպաշտ եղբայրներ եւ քույրեր,*

*Փառք եւ գոհություն ենք մատուցում առ Բարձրյալն Աստված, որ շնորհին ունենք հոգեւոր ավանդույթներով հարուստ Վեստմինստերյան աբբայությունում մասնակցություն բերելու Հայոց ցեղասպանության սրբադասված նահատակներին նվիրված էկումենիկ այս արարողությանը՝ Հայաստանի Հանրապետության մեծարգո Նախագահ տիար Սերժ Սարգսյանի, Հայ Եկեղեցու հոգեւոր դասի ներկայացուցիչների եւ հավատավոր զավակների հետ:*

*Շնորհակալությամբ ողջունում ենք ներկայությունն այստեղ Նորին Մեծություն Ուելսի արքայազն Չարլզի, ում սերն ու համակրանքը մեր ժողովրդի եւ մեր երկրի հանդեպ զգացել ենք տարբեր առիթներով, ինչպես վերջերս՝ Հայաստան իր այցելության ընթացքին:*

*Շարունակությունը՝ էջ 2*



## Վերաօծվեց Թբիլիսիի Ս. Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցին



Հոկտեմբերի 31-ին, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ու ներկայությամբ Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի, կատարվեց Թբիլիսիի Սբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցու վերաօծման հանդիսավոր արարողությունը:

13-րդ դարում կառուցված Ս. Գեւորգ եկեղեցու վերականգնման աշխատանքներն սկսվել էին 2012-ից՝ Վիրահայոց թեմի եւ «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» (IDeA) հիմնադրամի համատեղ ջանքերով:

Եկեղեցու առջեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին դիմավորեցին Վիրահայոց թեմի հոգեւորականաց դասը՝ գլխավորությամբ թեմակալ առաջնորդ Վազգեն եպս Միրզախանյանի, եկեղեցու բարերարները եւ բազում ուխտավորներ:

Այնուհետեւ, «Հրաշափառ» շարականի ներքո, Ամենայն Հայոց Հայրապետը եկեղեցականաց հանդիսավոր թափորով մուտք գործեց բարեզարդված եկեղեցի, ուր սկսվեց վերաօծման արարողությունը:

Արարողության ընթացքում՝ սուրբգրային ընթերցումներից եւ աղոթքներից հետո, Վիրահայոց թեմի սպասավորները շարականների եւ սաղմոսների ներքո ջրով ու գինով լվացին եկեղեցու սբ Սեղանը, խորանի սյուները եւ մկրտության ավազանը: Ապա խորան բարձրացվեց սրբալույս Մյուռոնը, որով Ամենայն Հայոց Կաթողիկոսը կատարեց եկեղեցու սբ Սեղանի վերաօծումը:

Ձեռամբ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի առաջնորդ Եզրաս արք. Ներսիսյանի, Վազգեն եպս Միրզախանյանի, Մայր Աթոռի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանի, Մայր Աթոռի լուսարարապետ Հովնան եպս Հակոբյանի եւ Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան եպս Նավասարդյանի՝ օծվեցին եկեղեցու խորանի սյուները, մկրտության ավազանը եւ խորանի շուրթը:

Հավարտ եկեղեցու օծման կարգի՝ Ամենայն Հայոց Հայրապետն իր պատգամն ու հայրապետական օրհնությունը բերեց ներկաներին.

*«Մեր սուրբ հայրերի փառաբանական աղոթքով գոհություն ենք մատուցում Տիրոջը, որ շնորհը պարգեւեց Մեզ կատարելու Թբիլիսիի Ս. Գեւորգ եկեղեցու վերաօծման արարողությունը: Նվիրական արարողության այս պահին վերապրեցինք Ս. Գեւորգ եկեղեցու ութդարյա առաքելության հիշատակները, որ խոսուն վկայություններն են Վրաստանի օրհնյալ հողում հայության հոգեւոր ու ազգային կյանքի զարթոնքի՝ միաժամանակ խորհրդանշելով հայ եւ վրաց ժողովուրդների դարավոր բարեկամությունը:*

*Ս. Գեւորգ զորավարը Քրիստոսի մեծագույն վկաներից է, ում անունը անխզելիորեն կապված է նաեւ հայ եւ վրացի եղբայր ժողովուրդների քրիստոնեական անցյալի հետ: Ս. Գեւորգն արդարության մարտիկ է՝ Քրիստոսի զինվոր, ով իր անձն ամբողջապես նվիրաբերեց քրիստոնեական հավատքի զորացմանը, Տիրոջ Ավետարանի լույս պատգամների տարածմանը: Շարականագիրը սբ Գեւորգ զորավարին կոչում է «քաջամարտիկ զորավար» եւ «մարդկային ազգի պարծանք»: Եկեղեցական պատկերագրության մեջ սբ Գեւորգը ներկայացված է որպես հեծյալ՝ վիշապին խորտակելիս, ինչը հոգեւոր խորհրդաբանությամբ բարու հաղթանակն է ընդդեմ չարի, լույսի հաղթանակը՝ ընդդեմ խավարի, ճշմարտության հաղթանակը՝ ընդդեմ կեղծիքի: Եկեղեցու պատմությունն ուսուցանում է, որ մեծահռչակ զորավարի նման անընկճելի նվիրյալների շնորհիվ է քրիստոնեությունը*



*հաստատվել աշխարհում եւ գրավել մարդկանց սրտեր ու հոգիներ: Ս. Գեւորգ զորավարի հանդեպ ակնածանքից ու հարգանքից է, որ հայ եւ վրաց ժողովուրդների զավակները սբ Գեւորգին նվիրված հոգեւոր ու մշակութային նվիրական արժեքներ են ստեղծել եւ իրենց որդիներին անվանակոչել եւ անվանակոչում են Գեւորգ անունով: Զորավար սրբի հանդեպ սերն է նաեւ վրաց ժողովրդին մղել՝ նրան հռչակելու Վրաստանի հովանավոր սուրբ»:*

*Շարունակությունը՝ էջ 2*

# Վեստմինստերյան աբբայությունում տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության սուրբ նահատակներին նվիրված արարողություն



Սկիզբը՝ էջ 1

*Եղբայրական Մեր սերն ենք փոխանցում Քենթրբերիի արքեպիսկոպոս Նորին Սրբազնություն Ջասթին Ուելբիին, ում հետ կոչված ենք Տիրոջ Ավետարանի լույսը տարածելու եւ քրիստոսավանդ պատգամները իրագործելու մեր ժողովուրդների կյանքում:*

*Մխիթարություն ենք ապրում, որ միջեկեղեցական համատեղ այս աղոթքով Անգլիկան Եկեղեցին եւ Միացյալ Թագավորության ժողովուրդն իր եղբայրական համերաշխությունն է հայտնում մեր ժողովրդին՝ արտահայտելով իր հարգանքը Հայոց ցեղասպանության զոհերի եւ սրբադասված նահատակների նկատմամբ:*

*Սիրելի՛ հավատակից եղբայրներ եւ քույրեր,*



*Մեր ժողովրդի սրտում դեռ չի սպիացել վերքը քսաներորդ դարասկզբին Օսմանյան կայսրության կողմից իրականացված ոճրի, որին իրենց ազգային պատկանելության եւ քրիստոնեական հավատքի համար զոհ գնացին մեկ եւ կես միլիոն հայորդիներ: Մենք կորցրեցինք պատմական, հինավուրց մեր հայրենիքի մեծագույն մասը, հազարավոր հայեր տարագիր սփռվեցին ողջ աշխարհով: Մեր ժողովրդի նահատակ զավակները մարտիրոսության պսակն ընդունեցին՝ հավատարիմ առաքելական պատգամին. «Եթէ արդարութեան համար չարչարուէք էլ, երանի՛ է ձեզ: Բայց ... մի՛ վախեցէք եւ մի՛ խռովուէք, այլ Տիրոջը՝ նոյն Ինքը Քրիստոսին սո՛ւրբ պահեցէք ձեր սրտերում» (Ա Պետ. 3.14):*

*Այսօր, երբ մենք ոգեկոչում ենք 100-ամյա տարելիցը Հայոց ցեղասպանության, Մենք վերստին մեր երախտագիտություն ենք հայտնում Ցեղասպանությունը ճանաչած ու դատապարտած, ինչպես եւ՝ Եղեռնից մազապուրծ հայորդիներին ապաստան տված բոլոր պետություններին, այլեւ քույր Եկեղեցիներին՝ դատապարտության իրենց խոսքը աշխարհում բարձրաձայն հնչեցնելու համար: Այս շարքում Մենք խոր զգացվածությամբ ենք հիշում, որ Բրիտանական կառավարությունը Առաջին Համաշխարհային պատերազմի տարիներին դաշնակից պետությունների հետ հայ ժողովրդի հանդեպ իրականացված եղեռնագործությունը որակեց հանցանք մարդկության դեմ: Համաշխարհային քաղաքակրթության մեջ Մեծ Բրիտանիայի ունեցած ներդրումը եւ մարդասիրական արժեքներին նվիրվածությունը վստահություն են ներշնչում, որ Միացյալ Թագավորությունն իր եղբայրական զորակցությունն ու նպաստը պիտի շարունակի բերել մեր ժողովրդի հանդեպ պատմական արդարության վերականգնման գործում:*

*Սիրելի բարեպաշտ եղբայրներ եւ քույրեր,*

*Հայոց ցեղասպանության ճանաչումը ոչ միայն պատմական մի իրողության, մեկ ժողովրդի հանդեպ կատարված եղեռնագործության դատապարտում է, այլեւ առավելաբար մերժումն ու բացառումն է մարդկության դեմ գործված եւ գործվող բոլոր տեսակի բռնությունների եւ ոճիրների, որոնց այսօր էլ զոհ են դառնում հազարավոր անմեղ մարդիկ՝ հատկապես Մերձավոր Արեւելքի երկրներում: Ցեղասպանության ժխտողականությունը կամ աջակցությունը ժխտողականությանը եւ կամ եղեռնագործ երկրների նկատմամբ զգուշավորության ու սիրաշահման քաղաքականությունը նոր խթան են ցեղասպանության հանցագործությունների կրկնության համար: Առաքելավանդ պատվիրանն ասում է. «Լուսոյ պտուղներն են բարութիւնը, արդարութիւնը եւ ճշմարտութիւնը: Ստուգեցէ՛ք, թէ ո՛րն է հաճելի Տիրոջը. եւ խաւարի անպտուղ գործերին մասնակից մի՛ եղէք, այլ մանաւանդ մերկացրէ՛ք դրանք» (Եփ. 5.9-11):*

*Մեզ համար հոգեւոր խոր գոհունակություն է, որ Վեստմինստերյան աբբայությունում մեր համատեղ աղոթքով ոգեկոչեցինք հիշատակը Հայոց ցեղասպանության զոհերի եւ հայցեցինք բարեխոսությունը սրբադասված նահատակների՝ հանուն մարդկության խաղաղ ու ապահով կյանքի: Հիշատակի արարողության կազմակերպման աշխատանքներում ներդրած ջանքերի համար Մեր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում Վեստմինստերյան աբբայության վանահայր հոգեշնորհ դոկտոր Ջոն Հոլին, Լոնդոնի եպիսկոպոս լորդ Ռիչարդ Չարթրեսին, Մեծ Բրիտանիայի հայոց թեմի առաջնորդ Հովակիմ եպս Մանուկյանին:*

*Մեր գնահատանքն ենք հայտնում Միացյալ Թագավորությունում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան տիար Արմեն Սարգսյանին՝ արարողության նախաձեռնության եւ նշանակալի ներդրումի համար:*

*Այս նվիրական պահին աղոթում ենք, որ Բարձրյալն Աստված զորացնի մեր Եկեղեցիները՝ Քրիստոսի սիրով մեզ վստահված հոտին ծառայելու, հոգեւոր միությամբ միմյանց զորավիգ լինելու եւ միասնաբար գործելու՝ հանուն բռնություններից ազատ, արդար եւ համերաշխ աշխարհի կառուցման:*

*Մեր աղոթքն է նաեւ, որ Տերն օրհնի եւ պահպանի Մեծ Բրիտանիո Միացյալ Թագավորությունը, նրա գահակալին՝ Նորին Արքայական Մեծություն Եղիսաբեթ Երկրորդ թագուհուն, իշխանություններին, Անգլիկան Եկեղեցուն ու բարեպաշտ ժողովրդին եւ Իր երկնառաք խաղաղությունը շնորհի համայն մարդկությանը:*

*Թող Տիրոջ օրհնության ներքո առավել զորանան եւ արգասավորվեն բարի հարաբերություններն ու համագործակցությունը մեր երկրների եւ ժողովուրդների:*

*Եվ թող մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի սերն ու շնորհները լինեն մեզ հետ եւ ամենքի՝ այսօր եւ միշտ. ամեն:*

# Վերաօծվեց Թբիլիսիի Ս. Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցին

Սկիզբը՝ էջ 1

Անդրադառնալով հայ եւ վրաց ժողովուրդների բարեկամական սերտ կապերին, ինչպես նաեւ Վրաց հողում դարերի ընթացքում վեր հառնած հայկական սրբավայրերի պահպանմանը՝ Վեհափառը հավելեց. *«Ս. Գեւորգ եկեղեցու վերաօծման հոգենորոգ այս առիթով մենք հիշում ենք մեր մեծանուն նախնիներին՝ հոգեւոր կյանքի, արվեստի, մշակույթի, գիր-գրականության հայազգի մշակներին՝ Ներսես Աշտարակեցի Հայրապետին, Նաղաշ Հովնաթանին, Սայաթ-Նովային, Մակար Եկմալյանին, Հովհաննես Թումանյանին, Րաֆֆուն, Մուրացանին, Գաբրիել Սունդուկյանին, նշանավոր բազում հայ նվիրյալներին, ովքեր աղոթել ու գործել են, ապրել ու ստեղծագործել են Վրաստանի հյուրընկալ հողում:*

*Վրացահայությունը Վրաստանը չի տարբերել պատմական իր հայրենիքից եւ գործել է ի սեր Վրաստանի բարօրության ու առաջընթացի, վրաց եղբայրական ժողովրդի հետ կրել է թե՛ զրկանքները եւ թե՛ տոնել հաջողությունները, իսկ անհրաժեշտության դեպքում լծվել վրաց սահմանների պաշտպանությանը թշնամիներից: Այսպես է, որ հայության համար Վրաստանը հարազատ աշխարհ է, սիրելի երկիր՝ քրիստոնեական կյանքի օրինակելի վկայություններով, ավանդական իր հյուրընկալությամբ, կյանքի ու կենցաղի գունագեղությամբ եւ ազգային յուրօրինակ արվեստով ու մշակույթով: Ուրախ ենք, որ այսօր եւս կենսունակ է վրացահայ համայնքը եւ նվիրված հոգեւոր իր կյանքի շինությանը՝ շարունակում է ջանքեր բերել Վրաստանի պայծառ ապագայի կերտմանը:*



*Մենք հավատում ենք, որ վերաօծված Ս. Գեւորգ եկեղեցին հոգեւոր կյանքի նոր շունչ պիտի հաղորդի մեր ժողովրդի զավակներին եւ պիտի առավել ամրացնի հայ եւ վրաց ժողովուրդների բարեկամությունը: Հայերը եւ վրացիները, որպես քրիստոնյա հինավուրց ազգեր, անսասան հավատքն ունեն հանդեպ Քրիստոսի Եկեղեցու սրբազան ու փրկարար առաքելությունը: Եկեղեցին երկնային ապաստարանն է երկրի վրա, ուր բնակվում են սերը, հաշտությունն ու խաղաղությունը, եւ ուր հանգչում են առօրյա հոգսերից բեկված հոգիները: Եկեղեցում է արձագանքում մեր Տիրոջ քաղցրաբարբառ կոչը. «Եկա՛յք առ Իս ամենայն վաստակեալք եւ բեռնաւորք, եւ Ես հանգուցից զձեզ» (Մատթ. ԺԱ 28): Եկեղեցում վերանում են թե՛ ազգային, թե՛ ռասսայական, թե՛ սոցիալական եւ թե՛ մշակութային խտրականությունները: «Չիք խտիր ո՛չ հրեայի եւ ո՛չ հեթանոսի, ո՛չ ազատի եւ ո՛չ ծառայի, ո՛չ արուի եւ ո՛չ էգի, զի ամենեքեանդ դուք մի էք ի Քրիստոս Յիսուս»,- ասում է առաքյալը (Գաղ. Գ 28): Եկեղեցում մենք դառնում ենք մեկ ի Քրիստոս Հիսուս, կոչված՝ լինելու հոգեւոր քույրեր ու եղբայրներ, Քրիստոսի սիրով ապրելու, Քրիստոսի լույսը սփռելու ամբողջ աշխարհում:*

*Սիրելի՛ բարեպաշտ հավատացյալներ, Ս. Գեւորգ եկեղեցու վերաօծման արարողությունը Մեր հայացքներն ուղղում է նաեւ Վրաց օրհնյալ երկրում կառուցված մեր սրբավայրերին՝ վանքերին ու եկեղեցիներին, որոնք աստվածմերժության տարիներից մնացել են աղոթազուրկ ու անխնամ եւ երբեմն նաեւ այսօր ցավալիորեն փլուզվում են ու ավերակ դառնում՝ հոգածության բացակայության պատճառով: Այսօրվա արարողությունը Մեզ վստահություն է ներշնչում, որ վրաց իշխանությունների աջակցությամբ եւ Վիրահայոց թեմի ու բարեպաշտ հավատացյալների ջանքերով վերստին պիտի բարեկարգվեն ու պայծառանան նվիրական մեր աղոթավայրերը»:*



Այս առիթով Նորին Սրբությունը Ս. Գեւորգ եկեղեցու նորոգության գործում դրսեւորած սատարումի, ինչպես եւ խորհրդային շրջանում Եկեղեցու կրած ավերների հետեւանքների վերացման նպատակով Վիրահայոց թեմին ցուցաբերված աջակցության համար շնորհակալություն հայտնեց վրաց իշխանություններին:

Ամենայն Հայոց Հայրապետը ողջունեց նաեւ Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի ներկայությունը սրբազան արարողությանը՝ մաղթելով նրան Աստծու զորակցությունը՝ իր բարձր առաքելության իրականացման մեջ:

Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց Եկեղեցու նվիրյալ զավակ տիար Ռուբեն Վարդանյանին՝ «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» հիմնադրամի միջոցով Ս. Գեւորգ եկեղեցու նորոգության աստվածահաճո ձեռնարկն իրականացնելու համար: Գարեգին Բ Հայրապետն իր օրհնությունը բերեց նաեւ նախաձեռնությանը միացած բարերար անձանց՝ Ալբերտ Ավդոլյանին, Բիձինա Իվանիշվիլուն, Դանիլ Խաչատուրովին, Սերգեյ Սարկիսովին, Կոնստանտին Մարգարյանին, Անդրեյ Մկրտչյանին եւ Բորիս Նահապետյանին:

Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց Վիրահայոց թեմի առաջնորդին ու բարեջան հոգեւոր սպասավորներին՝ վիրահայությանը բերած ջանադիր ու նախանձախնդիր ծառայության համար, ինչպես նաեւ՝ թեմական վարչության անդամներին, կրթական ու ազգային հաստատությունների նվիրյալներին: Հայրապետական օրհնության արժանացան նաեւ Ս. Գեւորգ եկեղեցու վերանորոգման գործում ջանքեր ներդրած հայ եւ վրացի ճարտարապետները, վարպետները, շինարարները եւ աշխատավորները:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց, որ Տերն արդյունաշատ դարձնի Վիրահայոց թեմի առաքելությունը՝ ի նպաստ Վրաստանի հայության հոգեւոր կյանքի զորացման:

Գարեգին Բ Հայրապետն աղոթեց նաեւ, որ Բարձրյալն Աստված սբ Գեւորգ զորավարի բարեխոսությամբ Իր օրհնության ներքո շեն ու պայծառ պահի Վրաց երկիրը, բարօրության մեջ՝ վրաց եղբայրական ժողովրդին, եւ հանապազ օրհնի երկու երկրների ու ժողովուրդների եղբայրությունն ու բարեկամությունը:

Արարողության ավարտին եկեղեցում տեղի ունեցավ պարգեւաբաշխություն: Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու պատվո բարձր շքանշանների եւ հայրապետական օրհնության գրերի արժանացան Ս. Գեւորգ եկեղեցու վերանորոգության գործում կարեւոր նպաստ ունեցած անձինք:

Ալբերտ Ավդոլյանին, Սերգեյ Սարկիսովին եւ Բիձինա Իվանիշվիլուն շնորհվեց «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշան: Կոնստանտին Մարգարյանին, Անդրեյ Մկրտչյանին ու Բորիս Նահապետյանին հանձնվեց «Ս. Ներսես Շնորհալի» շքանշան: Հայրապետական օրհնության գրեր տրվեցին Արթուր Ամիրխանյանին, Արամայիս Կամալովին, Իրինա Կոնդրատովային, Էլեոնորա Մալխասյանին, Արման Ջիլավյանին, Էդգար Մանուկյանին, Դավիդ Դավիդյանցին, Դավիդ Յակոբաշվիլուն եւ Արմինե Ղազարյանին:

Այնուհետեւ Վեհափառ Հայրապետը եւ ՀՀ նախագահը եկեղեցու բակում ներկա գտնվեցին բարերարների եւ նվիրատուների անվանական հուշատախտակի բացման արարողությանը:

Ս. Գեւորգ եկեղեցու վերաօծման արարողությանը ներկա էին Վրաստանի եւ Հայաստանի պետական այրեր, Հայ Եկեղեցու բարերարներ, օտարերկրյա դիվանագետներ եւ բազում վիրահայեր:

# Հայրապետական մաղթանք՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության 16-րդ տարեդարձի առիթով

Նոյեմբերի 8-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնում նշվեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օծման եւ գահակալության 16-րդ տարեդարձը:

Պատարագիչն էր ԱՄՆ հայոց արեւելյան թեմի առաջնորդ Խաժակ արք. Պարսամյանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ ուղեկցությամբ Նորին Սրբազնություն Չեխիայի կարդինալ, Պրահայի արքեպիսկոպոս Դոմինիկ Դուկայի, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամների, Մայր Աթոռի միաբանության, թեմակալ առաջնորդների եւ Հայ Եկեղեցու բարերարների, հանդիսավոր թափորով առաջնորդվեց Մայր տաճար:



Նորին Սրբության օծման եւ գահակալության 16-րդ տարեդարձի բերկրալից օրվա առիթով, հավատացյալների երկրպագության համար, Մայր տաճար էր բերվել Մայր Աթոռում պահվող Սկեւռայի հռչակավոր մասնատուփի կրկնօրինակը, որում ամփոփված են համաքրիստոնեական եւ հայ 15 սրբերի մասունքներ:

Պատարագի ավարտին Խաժակ սրբազանն Իշման սբ Սեղանի առջեւ իր քարոզում անդրադարձավ օրվա խորհրդին. «*... Մենք այս սրբություն սրբոցում՝ Մայր Աթոռ Սբ Էջմիածնում, մեր երախտագիտությունն ենք հայտնում Աստծուն, որ մեզ առիթ է ընձայում աղոթելու Ամենայն Հայոց Հայրապետի՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Կաթողիկոսի գահակալության 16-րդ տարեդարձի առիթով: Ոչ միայն աղոթելու, այլեւ մեր երախտագիտությունը, շնորհակալությունն ու շնորհավորանքները հայտնելու Վեհափառ Հայրապետին՝ անցած 16 տարիների ընթացքում արձանագրված բազում-բազում իրագործումների համար, որոնց շնորհիվ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին այս օրերին առավել զորացած, Հայաստանում եւ ի սփյուռս աշխարհի, շարունակում է իր առաքելությունը:*

*Աղոթքի եւ հոգեւոր խորհրդածության այս պահին մենք՝ Հայ Եկեղեցու զավակներս, վերհիշում ենք այն իրողությունը, որ հայ ժողովրդի մշակութային ժառանգությունն իր խորքով նախ եւ առաջ քրիստոնեական է եւ իր էությամբ հիմնված, հաստատված է պատմական երկու հրաշալի երեւույթների վրա: Առաջինը, որ տեղի ունեցավ Բեթղեհեմի խոնարհ մսուրի մեջ, երբ ավելի քան երկու հազար տարի առաջ Աստծու Միածին Որդին ծնունդ առավ՝ փրկելու ամբողջ աշխարհը: Այդ հրաշալի եղելությունը փոխեց համայն մարդկության պատմությունը, իսկ երկրորդը տեղի ունեցավ ճիշտ այստեղ: 1714 տարի առաջ, երբ Քրիստոսը Լուսավորչի տեսիլքով հայտնվեց համայն հայության հոգեւոր կենտրոնում, հայն ուխտեց հետեւել եւ աշակերտել Քրիստոսին՝ իբրեւ Տեր եւ Փրկիչ, իբրեւ Ճանապարհ եւ Ճշմարտություն ունենալով Միածնին: Ազգի եւ Քրիստոսի հավատքի միավորումը, միասնականությունը ծնունդ տվեցին հայ քրիստոնեական մշակույթին: Այն հարուստ մշակույթին, որ, փառք Աստծո, մենք՝ հայ ժողովրդի զավակներս, վայելում ենք մինչ այսօր:*

*Մեր ավանդության մեջ հոկտեմբեր ամիսը հռչակված է հայ մշակույթի ամիս, քանի որ, ըստ Հայ Եկեղեցու տոնացույցի, հոկտեմբեր ամսին տոնախմբում ենք մեր Եկեղեցու ամենից կարեւոր տոներից մեկը՝ Սրբոց Թարգմանչաց տոնը: Հիշում ենք Մեսրոպ Մաշտոցին, որ այդ օրերի Կաթողիկոս սբ Սահակի ջանքերով ու քաջալերանքով կատարեց հայոց պատմության ամենից կարեւոր գյուտը՝ հայ այբուբենի արարումը: Ս. Մեսրոպ Մաշտոցն իր շուրջը համախմբեց երիտասարդ հայ հոգեւորականներին, վարդապետներին՝ թարգմանչաց մի սքանչելի խմբի: Եվ հենց այդ սերունդն էր, որ Աստծո խոսքը՝ Աստվածաշունչը, վերածեց հայերենի: Այդ օրերը՝ 5-րդ դարի սկզբնական շրջանը, մեր պատմության ամենաճակատագրական, քաղաքական իմաստով ամենից դժվարինն էին: Հայաստանը բաժանված էր, եւ արտաքին ուժերի դեմ հայ ժողովուրդը չուներ միասնական ուժ, որ կարողանար պայքարել: Ահավասիկ՝ այդպիսի ճակատագրական պահին Մեսրոպ Վարդապետը, իր շուրջը հավաքելով թարգմանիչ վարդապետներին, ստեղծեց հայոց պատմության կարեւորագույն շրջանը՝ Ոսկեդարը, որի միջոցով հայը ոչ միայն հոգեւոր, այլ նաեւ ազգային իմաստով կարողացավ զգալ միասնականությունը: Ոսկեդարի ճանապարհով հայի համար սեփական ինքնությունը հստակ դարձավ՝ հիմնված Քրիստոսի հավատքի եւ ազգային կյանքի գիտակցության վրա: Քրիստոսը, հավատքը, հայրենիքը, ազգը եւ ազգային գիտակցությունը միավորվելով՝ կազմեցին հայոց ինքնությունը: Այդ ոգին է, որ 5-րդ դարում ուժ տվեց մեծ զորավար Վարդանին, Ղեւոնդ քահանային եւ նրանց հետեւող հայ ժողովրդի զավակներին՝ պարսից հսկայական բանակին ասելու. «Մեր հավատքից ոչ մի ուժ մեզ չի կարող բաժանել»: Այս հայտարարության հիմքը հայ ժողովրդի ինքնության գիտակցությունից է բխում, եւ Հայ Եկեղեցու ճանապարհով Ոսկեդարի այդ առաքելությունը շարունակական մնաց մեր ժողովրդի կյանքում՝ ե՛ւ Հայաստանում, ե՛ւ Սփյուռքում: Իսկ Հայ Եկեղեցին, Ամենայն Հայոց Կաթողիկոսության ղեկավարությամբ եւ առաջնորդությամբ, մնաց ռահվիրան ու առաջնորդը՝ պահելու եւ պահպանելու այդ ոգին*»,- նշեց պատարագիչ սրբազանն իր խոսքում:



Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության անունից իր շնորհավորանքի խոսքն ուղղելով սբ Գրիգոր Լուսավորչի Աթոռի 132-րդ գահակալին՝ սրբազան հայրը մասնավորաբար հավելեց. «*Վեհափա՛ռ Տեր, փառք ենք տալիս Աստծուն, որ Դուք՝ Գրիգոր Լուսավորչի եւ մեր երջանկահիշատակ հայրապետների արժանավոր հաջորդը, անցած 16 տարիների ընթացքում շարունակել եք այդ առաքելությունը: Մենք տեսնում ենք, թե ինչպես Ձեր իմաստությամբ, տեսիլքով ու անձանձրույթ աշխատանքով հարատեւորեն այստեղ՝ Մայր Աթոռում, Հայաստանում, Սփյուռքում ամբողջանում են այն սքանչելի ծրագրերը, որոնց շնորհիվ Մեսրոպ Մաշտոցի ոգին՝ Ոսկեդարի հայոց ինքնությունը շարունակվում է հայ ժողովրդի կյանքում:*

*Բնականաբար մենք գիտենք, որ ինչպես անցյալում, այնպես էլ այսօր մեր ժողովրդի առջեւ ծառացել են բազմաթիվ դժվարություններ ու մարտահրավերներ: Եվ Դուք, Վեհափա՛ռ Տեր, Ձեր նվիրումով, խորունկ իմաստությամբ, ջանասեր աշխատասիրությամբ ձգտում եք Հայ Եկեղեցու սպասավորներիս ցույց տալ՝ ինչպես հաղթահարել առկա դժվարությունները՝ Հայ Եկեղեցին Հայաստանում եւ ի սփյուռս աշխարհի առաջնորդելով ավելի զորացման եւ առաքելության առավել աշխուժացած տարածման՝ մանավանդ մեր երիտասարդ սերնդի կյանքում:*



*...Վեհափա՛ռ Տեր, Ձեր գահակալության 16-րդ տարեդարձի առիթով մենք բոլորս աղոթում ենք Ձեզ համար, որպեսզի Տերը Ձեզ ամուր եւ զորավոր պահի, եւ Ձեր այդ կրակը մշտապես մնա Ձեր մեջ, եւ այդ ոգով շարունակեք առաջնորդել Հայ Եկեղեցին*»:

Այնուհետեւ Իշման սբ Սեղանի առջեւ, հանդիսապետությամբ Ոսկան արք. Գալփաքյանի, կատարվեց Հայրապետական մաղթանքի արարողություն, որի ընթացքում ներկաներն աղոթեցին Ամենայն Հայոց Կաթողիկոսության անսասանության եւ պայծառության, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կյանքի արեւշատության եւ արգասավոր հովվապետության համար:

# Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պաշտոնեությանը

Նոյեմբերի 9-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օծման եւ գահակալության 16-րդ տարեդարձի առիթով ընդունեց Մայր Աթոռի պաշտոնեությանը:



Հանդիպումն սկսվեց Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանի ողջույնի խոսքով: Սրբազանը, շնորհավորելով Ամենայն Հայոց Հայրապետին, մասնավորապես անդրադարձ կատարեց անցնող տարվա ընթացքում հոգեւոր-եկեղեցական կյանքում արձանագրված հաջողություններին:

Մայր Աթոռի պաշտոնեության անունից շնորհավորանքի խոսք ասաց նաեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարանի տնօրեն պրն Հարություն Գյումուշյանը:

«*Վեհափա՛ռ Տեր, այսօր այստեղ հավաքվել են մարդիկ, որոնց կյանքի մի զգալի ժամանակահատվածը միահյուսված է Մայր Աթոռի ընթացքի հետ, եւ մենք մշտապես տեսնում ենք, թե Դուք ինչպիսի ներշնչանքով, անկոտրում կամքով ու անխոնջ աշխատանքով ուղղորդում եք մեր Սբ Եկեղեցին: Ձեր նվիրումն ու եռանդը ոգեշնչում են մեզ, եւ մենք էլ մեր հերթին փորձում ենք, թեկուզ եւ չնչին կերպով, նպաստել այն եկեղեցաշեն ու ազգանվեր գործին, որ իրականացնում եք տարիների ընթացքում:*

*Գաղտնիք չէ, թե որքան կարեւոր ծրագրեր եք կյանքի կոչել թե՛ հոգեւոր-կրթական ոլորտում, թե՛ եկեղեցական կյանքում, թե՛ քույր Եկեղեցիների հետ հարաբերություններում, թե որքան հիմնարար հարցեր եք լուծել մեր Եկեղեցու ամրապնդման ու զորացման համար ե՛ւ Սփյուռքում, ե՛ւ հայրենիքում: Վստահաբար պատմությունը Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետին կոչելու է որպես եկեղեցաշեն եւ ազգանվեր Կաթողիկոս, որովհետեւ դեռ ժամանակի ընթացքում են վեր խոյանալու եւ պտուղ տալու այն ծրագրերը, որոնց սերմերն արդեն ցանված են այսօր*»,- նշեց նա իր խոսքում՝ մաղթելով, որ Աստված ուժ եւ զորություն տա Նորին Սրբությանը՝ այս դժվարին ժամանակներում վառ պահելու քրիստոնեության ջահը եւ իր իմաստությամբ ու անսահման նվիրումով երկար տարիներ առաջնորդելու հայ ժողովրդին:

Այնուհետեւ Մայր Աթոռի աշխատակիցներին իր օրհնությունը բերեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Ուրախություն հայտնելով հանդիպման առիթով՝ Նորին Սրբությունը գոհունակությամբ նշեց, որ Մայր Աթոռի աշխատակիցները, երբեմն նաեւ մեծ զոհողությունների գնով, սիրով եւ հանձնառության ոգով իրենց ծառայությունն են բերում հայոց հոգեւոր կենտրոնին՝ գիտակցելով, որ Մայր Աթոռը հայոց ազգի տունն է, պատիվը եւ դեմքը:

«*...Մեր ակնկալությունն է, որ մեր պաշտոնեությունը շարունակի նույն նախանձախնդրությամբ ու նվիրումով իր ծառայությունը՝ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի փառքի եւ պայծառության համար:*

*Ցանկանում ենք բարձր գնահատանքի արժանացնել բոլորիդ աշխատանքը. նվիրյալ ոգով ու սրտով դուք ձեր ծառայությունն եք մատուցում: Այն, ինչն իրագործվում է Մայր Աթոռ Սբ Էջմիածնում, ողջ աշխատակազմի ձեռքբերումն է: Մեր՝ բոլորիս համատեղ աշխատանքի արդյունքն է այն, ինչը մենք արձանագրում ենք որպես հաջողություն: Յուրաքանչյուր աշխատակից իր նվիրյալ ջանքերով է ապահովում այս հաստատության առաջընթացը, եւ մենք մեծապես ուրախ ենք եւ բարձրորեն գնահատում ենք...*»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

Հանդիպումն ավարտվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի Պահպանիչ աղոթքով:

# Դիլիջանում կառուցվելիք եկեղեցու հողօրհնության արարողությունը

Հոկտեմբերի 30-ին, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Տավուշի թեմի Դիլիջան



քաղաքում տեղի ունեցավ կառուցվելիք եկեղեցու հողօրհնեքի հանդիսավոր արարողությունը:

Եկեղեցին կառուցվելու է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, Դիլիջանի քաղաքապետարանի, «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» հիմնադրամի, ինչպես նաեւ «Դիլիջանի զարգացման հիմնադրամի» համատեղ ջանքերով: Եկեղեցաշինական ծրագրի իրականացման բարերարներն են Ռուբեն Վարդանյա-



նը, Գագիկ Ադիբեկյանը, Մաքսիմ Աթայանցը եւ Արմեն Կարապետյանը:

Դիլիջանում Ամենայն Հայոց Կաթողիկոսին դիմավորեցին աղուհացի ավանդական արարողությամբ: Ապա խոսքով հողօրհնեքի մասնակիցներին դիմեցին Դիլիջանի քաղաքապետ Արմեն Սանթրոսյանը եւ «Դիլիջանի զարգացման հիմնադրամի» ղեկավար Արթուր Հակոբյանը:

Նրանց ելույթից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսին ողջունեց Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ եպս Գալստանյանը՝ օրինաքեր այցելության համար շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանը: Սրբազանն ուրախություն հայտնեց, որ Դիլիջան քաղաքը պատմական երկար ընդմիջումից հետո զարդարվելու է նոր աղոթատնով:

Այնուհետեւ Դիլիջան քաղաքի եկեղեցու կառուցման վայրում կատարվեց հողօրհնեքի արարողությունը: Նորին Սրբության գլխավորությամբ հոգեւորականաց դասն աղոթեց կառուցվելիք եկեղեցու անսասանության եւ պայծառության համար:

Սրբազան արարողության ավարտին իր հայրապետական պատգամը ներկաներին ուղղեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

*«Հոգու բերկրանոք այսօր կատարեցինք հողօրհնեքի արարողությունը Դիլիջանում կառուցվելիք եկեղեցու: Դարեր շարունակ Հայաստանի բոլոր բնակավայրերում եկեղեցական կառույցներ, աղոթավայրեր են հիմնվել մեր բարեպաշտ հայրերի ջանքերով՝ հավատացյալ հայորդիներին հոգատարություն եւ հոգեւոր խնամք ցուցաբերելու, Աստծո հետ հաղորդակցությունը մշտարթուն ու կենդանի պահելու համար»,-* ասաց Հայոց Հայրապետը՝ փառք վերառաքելով Աստծուն, որ կյանքի է կոչվում Դիլիջանի եկեղեցու երկար սպասված կառուցումը:

Նորին Սրբությունը նշեց, որ կառուցվելիք եկեղեցին աստվածային երկնառաք նոր օրհնություն պիտի բերի Դիլիջանի բնակիչներին եւ պիտի պայծառազարդի նրանց հոգեւոր-եկեղեցական կյանքը:

Անդրադառնալով մարդկային կյանքում եկեղեցու կարեւոր առաքելությանը՝ Վեհափառ Հայրապետը հավելեց. *«Եկեղեցին հուշարարն է մեր առաքելության՝ ապրելու Բարձրյալի կամքի ու պատվիրանների համաձայն, հեռու մնալու մեղքից ու չարիքից, ազգային-եկեղեցական մեր անդաստանում առատացնելու հայրենաշեն ու ազգաշեն աստվածահաճո ձեռնարկումները: Աստծո եւ Եկեղեցու հանդեպ հավատքի ամրությունը գրավականն է եղել եւ շարունակելու է լինել մեր ժողովրդի գոյատեւման ու առաջընթացի, նոր ձեռքբերումների ամրագրման եւ հայոց լուսավոր, նոր գալիքի կերտման»:*

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը հայտնեց եկեղեցու բարերարներին, որոնց ազնիվ ջանքերով բազում ազգօգուտ ծրագրեր են իրագործվում, իր մասնավոր գնահատանքը փոխանցեց Մայր Աթոռի բարերար, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ տիար Ռուբեն Վարդանյանին, ով մշտապես բարի ձեռնարկումներով աջակցում է Հայոց Եկեղեցու եւ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի առաքելության արգասավոր իրականացմանը: Վեհափառն ընդգծեց, որ Ռուբեն Վարդանյանի անվան հետ են կապված ազգանվեր ու եկեղեցաշեն մի շարք ձեռնարկումներ՝ Դիլիջանի միջազգային դպրոցի հիմնումը, Վրաստանի Սբ Գեւորգ եկեղեցու նորոգումը, Տաթեւի բարեկարգումը, Ցեղասպանության 100-րդ տարելիցին մեկնարկած «100 կյանք» ծրագիրը:

Հայոց Հովվապետը հավատքի լույսը, ազգանվիրումն ու հայրենասիրությունը տավուշցիների հոգիներում վառ պահելու համար իր օրհնությունը բերեց նաեւ Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ սրբազանին եւ թեմի հոգեւոր դասին:



Եկեղեցու առաքելությանն ըստ ամենայնի զորակցելու համար հայրապետական գնահատանք փոխանցելով Տավուշի մարզպետին, Դիլիջանի քաղաքապետին եւ ներկաներին՝ Նորին Սրբությունը մաղթեց, որ Տերն աջակից լինի բոլոր այն անձանց, ովքեր նախանձախնդիր իրենց ջանքերն են ներդնելու եկեղեցու շինության աստվածահաճո ձեռնարկին:



Խոսքի վերջում Նորին Սրբությունը Երկնավորից հայցեց, որ Իր ամենախնամ Սբ Աջով խաղաղության ու ապահովության մեջ պահպանի Հայաստան աշխարհը, հաջողություններով պսակի համայն հայության եկեղեցաշեն ու ազգանպաստ կարեւոր իրագործումները եւ երկնառաք բյուր պարգեւներ շնորհի հայոց հավատավոր ազգին:

Այնուհետեւ ելույթներով հանդես եկան «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» հիմնադրամի Դիլիջանի համայնքային կենտրոնի երգչախումբն ու պարային խումբը, ինչպես նաեւ ելույթ ունեցավ Դիլիջանի գեղարվեստական դպրոցի պարախումբը:

Տավուշի թեմ կատարած այցի ընթացքում Նորին Սրբությանն ուղեկցում էին Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի առաջնորդ Եզրաս արք. Ներսիսյանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանը, Մայր Աթոռի լուսարարապետ Հովնան եպս Հակոբյանը, Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան եպս Նավասարդյանը, Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Շահե վրդ. Անանյանը, Նորին Սրբության գավազանակիր Աղան աբղ. Երնջակյանը, Մայր Աթոռի տեղեկատվական համակարգի տնօրեն Վահրամ քհն. Մելիքյանը եւ Մայր Աթոռի բարերար տիար Գաբրիել Չեմբերջյանը:

Արարողությունից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատվիրակության ուղեկցությամբ մեկնեց Վիրահայոց թեմ՝ հանդիսապետելու Թբիլիսիի Ս. Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցու վերաօծման արարողությունը:

# Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով Մայր Աթոռ Սբ Էջմիածնում

*Սկիզբը՝ էջ 4*

Բելգիայում հայոց եկեղեցական համայնքների մասին զեկույցով հանդես եկավ Դիվանատան ներեկեղեցական հարաբերությունների գրասենյակի տնօրեն Պարույր քհն. Ավետիսյանը՝ ներկայացնելով բելգիահայ ծխական համայնքների կազմավորման առնչությամբ տրված հանձնարարականների գործընթացը եւ դրանց արդյունքները: Հավելյալ տեղեկություններ փոխանցեց նաեւ Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ Վահան եպս Հովհաննիսյանը:

Անդրադարձ կատարվեց նաեւ եկեղեցական ժողովական կառույցներին: Քննարկումների արդյունքում ծրագրվեց առաջիկա տարում Մայր Աթոռ Ս. Էջմիածնում գումարել ազգային-եկեղեցական ժողով: Այս կապակցությամբ ստեղծվեցին համապատասխան հանձնախմբեր:

Եպիսկոպոսաց ժողովի նորաստեղծ գրասենյակի գործունեության վերաբերյալ զեկույց ներկայացրեց գրասենյակի տնօրեն Զաքարիա վրդ. Բաղումյանը: Գերագույն հոգեւոր խորհուրդը ուղենշեց գրասենյակի ապագա գործունեության շրջանակները:

Ժողովի ավարտին Գերագույն հոգեւոր խորհրդի անդամները շնորհավորեցին Ամենայն Հայոց Հայրապետին՝ գահակալության 16-րդ տարեդարձի առիթով՝ մաղթելով Նորին Սրբությանը կենաց արեւշատություն եւ հովվապետական բեղուն գործունեություն՝ ի փառս Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու եւ ի մխիթարություն հավատավոր հայ ժողովրդի:

Ժողովը փակվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի Պահպանիչ աղոթքով:

## Ամենայն Հայոց կաթողիկոսը ցավակցագիր է հղել ՌԴ նախագահին եւ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարքին

Հոկտեմբերի 31-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցագիր է հղել Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինին եւ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Ա Պատրիարքին՝ Շարմ-էլ-Շեյխից Սանկտ Պետերբուրգ թռիչք իրականացնող ռուսաստանյան ինքնաթիռի վթարի կապակցությամբ:

Նորին Սրբությունը Գերագույն հոգեւոր խորհրդի, Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու հոգեւորականաց եւ հավատացելոց անունից վշտակցություն է հայտնել ՌԴ նախագահին, Համայն Ռուսիո Պատրիարքին եւ Ռուսաստանի սգակիր ողջ ժողովրդին:

*«Հայցում ենք Բարձրյալին՝ Սուրբ Հոգով մխիթարել զոհվածների ընտանիքներին եւ Ռուսաստանի բարեպաշտ ժողովրդին: Եվ թող Աստծու ողորմությամբ երկնային բարձունքներում խաղաղությամբ հանգչեն զոհվածների հոգիները»,-* ասված է Ամենայն Հայոց Հայրապետի ցավակցագրում:

